ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 222- Ա

21 հուլիսի 2015 թ.

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, ,,Քաղաքացիական ծառայության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2002թ. օգոստոսի 1-ի N 40 որոշմամբ հաստատված ,, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգի,, 9-րդ կետի պահանջները

*որոշում եմ՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի առաջատար մասնագետի (64-3.2-18) թափուր պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների մրցութային հանձնաժողովի կազմը՝ Միքայել Եղիազարյան (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ), Սահակ Ասլանյան (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի ներկայացուցիչներ, Դերենիկ Հովհաննիսյան (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ), Գևորգ Խաչատրյան (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ)՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, Մելանյա Հովակիմյան (Գավառի N3 հիմնական դպրոցի տնօրեն), Գայանե Խանամիրյան (Գավառի N4 միջնակարգ դպրոցի փոխտնօրեն)՝ ուսումնական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ:
2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Միքայել Եղիազարյանին, քարտուղար՝ Սահակ Ասլանյանին:
3. Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ